ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2019 թ. հունվարի 24-ին տեղի ունեցավ 1-ին Բ դասարանի հերթական ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին 30 ծնողներ, չէր ներկայացել Նարեկ Հայրապետյանի ծնողը:
Ժողովին մասնակցում էր նաև տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զ. Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2-րդ կիսամյակի անելիքները:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին.- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

Դասվար Հ. Սարգսյանը նախ շնորհավորեց բոլորի Նոր տարին և Սուրբ Ծնունդը, շնորհակալություն հայտնեց ծնողներին ժողովին պարտաճանաչ ներկայանալու համար, որից հետո ծնողներին մեկ-մեկ ներկայացրեց 1-ի կիսամյակում ձեռք բերած գիտելիքների և թերացումների մասին: Ուսուցչուհին դժգոհեց Նարեկ Հայրապետյաի ծնողների անտարբեր վերաբերմունքից, ասաց, որ ծնողները տեղյակ լինելով, թե երբ են սկսվում դասերը, երեխային դասի չեն ուղարկում, որի արդյունքում տուժում է երեխան:

Որոշեցին.- Լինել էլ ավելի հետևողական, մշտական կապ պահպանել դպրոցի, պարապող ուսուցիչների, դասղեկի հետ:

2.Լսեցին.- 2-րդ կիսամյակի անելիքների հարցը:

Հ. Սարգսյանն ասաց, որ իրենց համատեղ աշխատանքի շնորհիվ պետք է վերացնեն 1-ին կիսամյակում, թույլ տված թերացումները, իսկ 2-՝րդ կիսանմյակում հնարավորինս զերծ մնալ

Որոշեցին.- Համաձայնել ուսուցչուհու հետ, համագործակցել նրա հետ, օգնել նրան այդ հարցում:

3.Ընթացիկ հարցեր:

Ա. Դասղեկ Հ. Սարգսյանը ծնողներին տեղեկացրեց 2-րդ կիսամյակում կատարված փոփոխությունների մասին: Նա ասաց, որ ֆիզկուլտուրան պարապելու է ֆիզկուլտուրայի ուսուցիչը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է աշակերտներին ապահովել սպորտային համազգեստով:

Բ. Դասղեկը նաև նշեց, որ դասարանի աշակերտների քանակով իրենց թանգարան հաճախելու տոմսեր են հատկացվել, սակայն ուզում են այնպես անել, որ էքսկուրսիան զուգակցվի նաև տիկնիկային ներկայացում դիտելու հետ:

Գ. Հ. Սարգսյանը նաև խոսեց 1-ին դասարանում հուշալրումներ ունենալու մասին: Նա ասաց, որ դա պարտադիր չէ, կախված է ծնողի համաձայնությունից: Քննարկման արդյունքում բոլորն էլ կողմ էին, որ իրենց երեխաներն ունենան հուշալրումներ:

Որոշեցին.- Ա. Լինել հետևողական, սկզբնական շրջանում աջակցել ուսուցչին մինչև երեխաների ադապտացումը:

Բ. Հանձնարարել ծնողխորհրդի նախագահ Տաթև Ազատյանին, կազմակերպել այդ աշխատանքները և էքսկուրսիան կազմակերպել մարտի առաջի շաբաթվա ընթացքում:

Գ. Հրավիրել իրենց նախընտրած լուսանկարիչին և պատվիրել:

Ժողովի նախագահ՝ /Տաթև Ազատյան/

Քարտուղար՝ /Անի Շահինյան/